ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մայիսի 2021 թվականի N 82

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԻՔՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ՝ 7, 7/1, 9 ԵՎ 9/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եսթեր Ալեքսանդրի Ալեքսանյանի լիազորված անձ Դավիթ Վրեժի Պետրոսյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Միքայելյան փողոց թիվ՝ 7, 7/1, 9 և 9/1 հասցեներում գտվող անշարժ գույքի միավորման արդյունքում առաջացած միավորին նոր փոստային հասցե տրամադրելու, հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու խնդրանքը, 04.09.2018թ. N 04092018-06-0025, 04.09.2018թ. N 04092018-06-0018, 05.06.2019թ. N 05062019-06-0043 և 08.01.2019թ. N 08012019-06-0007 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, 25.07.2019թ. թիվ 10 շինարարության թույլտվությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի քաղաք Ստեփանավան, Միքայելյան փողոց թիվ՝ 7, 7/1, 9 և 9/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացած միավորի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան քաղաք Ստեփանավան Միքայելյան փողոց թիվ 9 բնակելի տուն :

2. Միավորված հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտել համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավար կաղմից հաստատված տեղագրական հատակագծի և հողամասի մակերսի չափը սահմանել՝ 0.30213 հա:
3. Հաստատել 0.30213 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության միավորված հողամասի նկատմամբ Եսթեր Ալեքսանդրի Ալեքսանյանի սեփականության իրավունքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մայիսի 2021 թվականի N 83

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ս. ՆՇԱՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ, 06-007-0208-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի բնակիչ Ջինֆիրիդա Գեղամի Հովսեփյանի կողմից ներկայացված 11.05.2021թ. թիվ Հ-208 դիմումը, 30.09.2005թ.. թիվ 1128027 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Ս. Նշանի փողոց թիվ 11 բնակելի տուն հասցեում 06-007-0208-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.
   ա. 0.0121 հա հողամասի և հողամասում առկա շինության փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Սուրբ Նշանի փողոց թիվ 46/2:
   բ. 0.0557 հա հողամասի և հողամասում առկա շենք շինությունների փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Սուրբ Նշանի փողոց թիվ 46/1:
2. 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մայիսի 2021 թվականի N 84

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ 06.05.2021Թ. ԹԻՎ 79 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.05.2021թ. թիվ 79 որոշումը, 12.05.2021թ. N Կ-12052021-06-0137 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.05.2021թ. թիվ 79 որոշման վերնագրում Անտառային բառից հետո ավելացնել փողոց բառը:
2. Ստեփանավան համայնքի ղեկավարի 06.05.2021թ. թիվ 79 որոշման 4-րդ կետում Անտառային բառից հետո ավելացնել փողոց բառը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2021 թվականի N 85

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 Ա ՀԱՍՑԵՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղամ Ֆելիքսի Չատինյանի կողմից 14.05.2021թ ներկայացված թիվ Գ-221 դիմումը, 12.122006թ. թիվ 2136342 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի Սուրբ Նշան փողոց թիվ 11ա հասցեով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Սուրբ Նշան փողոց թիվ 46/3:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2021 թվականի N 86

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Չարենցի փողոց թիվ 53 հասցեի բնակիչ Շուշան Արուստամյանի 12.05.2021թ. թիվ Ա-210 դիմումը, Վիրահայոց փողոց թիվ 78ա/7 հասցեի բնակիչ Ստելլա Քոչարյանի 12.05.2021թ. Ք-215 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 14.05.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ Շուշան Արուստամյանին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ և Ստելլա Քոչարյանին 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2021 թվականի N **87**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Ստեփանավան համայնքի տարածքում սահմանել տեղամասային կենտրոններ՝

   1) Թիվ 3 դպրոցի շենք, Աշոտաբերդ թաղամաս
   2) Թիվ 3 մանկապարտեզի շենք, Տերյան փողոց թիվ 32
   3) ԲՀԷՍ գործարանի վարչական շենք, Բաղրամյան փողոց թիվ 124
   4) Թիվ 1 դպրոցի շենք, Բաղրամյան փողոց թիվ 65
   5) Ավագ դպրոցի շենք, Հ. Մեղապարտի փողոց թիվ 13
   6) Թիվ 2 դպրոցի շենք, Մ. Պապյան 44
   7) Անասնաբուժարանի վարչական շենք, Անդրանիկի փողոց թիվ 15
   8) Քաղաքային մարզադպրոցի շենք, Բոնդրև փողոց թիվ 1
   9) Թիվ 6 դպրոցի շենք, Վիրահայոց մայրուղի
   10) Թիվ 4 մանկապարտեզի շենք, 4 մկրշ. 5 փող.
   11) Արմանիսի դպրոցի շենք, Արմանիս՝ 51 թաղամաս 2-րդ փողոց շենք 13
   12) Կաթնաղբյուր բնակավայրի դպրոցի շենք, 8 փող. 1 նրբ. 5 շենք
   13) Ուրասար բնակավայրի դպրոցի շենք, 2 փող. 36 շենք

2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 25 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2021 թվականի N 88

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-051-0015-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Ներսիսյանի կողմից ներկայացված 10.05.2021թ. թիվ Ա-205 դիմումը, 01.08.2003թ. թիվ 1804882 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 238 -Ն որոշմամբ՝ *որոշում եմ*

1. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի 06-051-0015-0006 ծակագրի անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, գ. Կաթնաղբյուր, 2-րդ փողոց, թիվ 20 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2021 թվականի N 89

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.05.2021Թ. ԱՐՄԱՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 12.06.1991Թ. ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 30.04.2010թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ղեկավարվելով՝ Հայաստանի հանրապետության հողայի օրենսգրքի 43-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի 05.05.2021թ. Արմանիս գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.06.1991թ. թիվ 4 որոշման քաղվածքը:
2. Ըստ օրենքի ժառանգության վկայագրի 06-007-0613-0028 վարելահողի մակերեսը կազմում է 1.111 հա, նույն հողամասը «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից փաստացի չափագրմամբ կազմում է 1.1116 հա:
3. 06-007-0613-0028 ծածկագրի 1.1116 հա վարելահողի պետական գրանցման համար հիմք ընդունել Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից 14.05.2021թ. տրված Արմանիս գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.06.1991թ. թիվ 4 որոշման քաղվածքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2021 թվականի N 90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Մ.Պապյան և Գ. Նժդեհ փողոցների խաչմերուկում գտնվող գովազդային վահանակ - 4քմ
2) Միլիոնի և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում, այգու հարևանությամբ գտնվող գովազդային վահանակ - 4քմ
3) Կաթնաղբյուր բնակավայր 1-ին փողոց 30 բնակարան - 6քմ
4) Կաթնաղբյուր բնակավայր 1-ին փողոց 4 բնակարան - 5քմ
5) Կաթնաղբյուր բնակավայր 3-րդ փողոց 10 բնակարան – կից կառույց - 5քմ
6) Կաթնաղբյուր բնակավայր 10-րդ փողոց 3 բնակարան շենք 3 - 6քմ
7) Կաթնաղբյուր բնակավայր 10-րդ փողոց 6 բնակարան – կից տուն - 6քմ
8) Ուրասար բնակավայր 3-րդ փողոց 26 ակումբի շենք
9) Ուրասար բնակավայր 3-րդ փողոց 28 խանութի շենք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2021 թվականի N **91**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՎԵՐՋՆԱՄԱՍ ԽԱՆՈՒԹԻ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բետխեմ Սեդրակի Կիրակոսյանի կողմից ներկայացված 12.05.2021թ. թիվ Կ-212 դիմումը, 04.06.2003թ. տրված թիվ 1685944 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Մ.Բաղրամյան վերջնամաս խանութի հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Մ. Բաղրամյան փողոց թիվ 149/2 խանութ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ